Տ. ՆԱԹԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԲՅ. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 փետրվարի 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր ճակառակ. որ յԻւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զՆա, զիա՞րդ ոչ Նովաւ ճանդերձ զամենայն շնորհիցէ մեզ»

(Հովհ. Ը. 31)։

Սիրելի՛ քույրեր եւ եղբայներ,

Այսօր Հայաստանյայց Եկեղեցում տոնվում է ազգային եկեղեցական հնագույն եւ ամենասիրելի տոներից մեկը՝ Սրբոց Վարդանանց հիշատակի տոնը։

Արդ, ավելի քան 15 հարյուրամյակ է անցել այն օրից, երբ նրանք իրենց սխրանքն ու քաջությունը բերեցին հայրենիքի ու ազգի համար՝ հայտնի՝ Վարդանանց պատերազմում եւ Ավարայրի ճակատամարտում։ Այս 15 հարյուրամյակի ընթացքում հայ ժողովուրդը բազում պատերազմներ ու ճակատամարտեր է ունեցել, բայց Ավարայրի ճակատամարտն իր հատուկ, ուրույն տեղն ունի մեր պատմության եւ մեր ժողովրդի հոգում, սրտում եւ առօրյա կյանքում։

Արդյոք ինչո՞վ էր տարբերվում այս պատերազմը մյուս պատերազմներից, Ավարայրի ճակատամարտը՝ մյուս ճակատամարտերից։

Ե. դար, հայ ժողովուրդը 150 տարի ընդունել էր քրիստոնեությունը անհատապես՝ որպես հայ ժողովրդի պետականության գրավական եւ հայ ժողովրդի պետական կրոն։

Եւ դժվարին ժամանակներ, երբ Պարսկաստանն իր հավակնություններն ուներ ոչ միայն Հայաստանն ընդհանրապես Պարսկաստան դարձնելու, այլեւ հայերին պարսկացնելու, որով բոլոր իր ցանկությունները կիրականանային։ Սակայն պատմությունից գիտենք, որ որեւէ կերպ հայերին

չէին կարող օտարացնել իրենց ազգից։ Դրա պատճառը շատ հստակ մեր ոսոխն է ասում, մեր թշնամին այն ժամանակվա. հայի մարմինը կարող ենք գերեվարել, բայց նրա հոգին՝ ո՛չ երբեք, որովհետեւ նրա հոգին քրիստոնեությունն է։ Այս էր պատճառը, որ բացի երկրին տիրանալուց՝ որոշեցին տիրանալ հայի հոգուն, իսկ դա հնարավոր էր միայն այն դեպքում, երբ նրան հեռացնեին իր հավատքից ու կրոնից, դավանափոխ անեին։ Եւ այս ծրագիրը պարսից Հազկերտ թագավորը շատ լուրջ կերպով սկսեց իրականացնել։

Նամակ հղվեց հայերին, որ նրանք ընդունեն, իրենց կարծիքով, ամենաճիշտ կրոնը՝ զրադաշտությունը։ Հայերը, հավաքվելով բոլորը միասին՝ թե՛ աշխարհական, թե՛ եկեղեցական, պատասխան տվեցին Հազկերտին. «Երբեք հնարավոր չէ մեզ հեռացնել Քրիստոսի սիրուց, ոչ մի միջոցով հնարավոր չէ մեզ հեռացնել մեր հավատքից եւ կրոնից, ո՛չ ջուր, ո՛չ սուր, ո՛չ կրակ, ո՛չ մարդ եւ ո՛չ հրեշտակ, ոչինչ չի կարող մեզ հեռացնել Հիսուսից» (հմմտ. Հռոմ. Ը. 35)։ Եւ այս պատասխանից հետո, բնական է, պարսիկները որոշեցին՝ եթե հայերին չեն կարող կրոնափոխ անել բռնի ուժով, ապա պարզապես պետք է նրանց վերացնել։

451 թ. Հայաստանը պատրաստվում էր պատերազմի ու մեծ ճակատամարտի։ Երիտասարդ թե ծեր, իշխան թե գյուղացի հավաքվեցին բոլոր տեղերից՝ պաշտպանելու իրենց ինքնությունը, որովհետեւ կրոնն այլեւս դարձել էր հայի ինքնությունը։ Այդ նույն ժամանակ աշխարհի մյուս մասը հավաքվել էր աստվածաբանակ ժողովներ գումարելու Քրիստոսի բնությունների շուրջ, իսկ հայերը ոչ թե աստվածաբանելու հավակնեցին, այլ Քրիստոսին պաշտպանելու եւ պահելու իրենց կյանքում։

Ճակատամարտն անհավասար ուժերով էր, եւ դժվար կլիներ հաղթել պարսկական մեծ զորքին, սակայն հայերը մինչեւ արյան վերջին կաթիլը դիմադրեցին եւ պաշտպանեցին իրենց հավատքը, իրենց Եկեղեցին։

Բոլորդ քաջ հիշում եք եւ հաճախ եք կրկնում, որ այդ ճակատամարտից առաջ էր, երբ զորավարը, իր մարտիկներին քաջալերելով, կոչ էր անում գնալ կենաց-մահու կռվի, որովհետեւ մենք պաշտպանում էինք մեր ազգը, մեր արյունը, մեր ինքնությունը, քանզի քրիստոնեությունը մեզ համար ոչ թե պարզ մի հավատք է, կրոն է, հավատամք է, այլ հայ ժողովրդի մաշկի գույնն է, որով հայ ազգը Տիրոջ ժողովուրդն է հավիտենապես։

Ահավասիկ պատերազմը, ինչպես ասացի, ֆիզիկապես դժվար էր հաղթել, սակայն հայի հոգին անպարտելի մնաց, որից հետո պարսիկներն այլեւս կրոնափոխ անելու հարցը չէին դնում։

Սրանով է, թերեւս, շատ կարեւոր մեր պատմության, մեր մտքի ու գիտակցության համար այն, որ հենց Ավարայրի ճակատամարտով էր, Վարդանանց պատերազմով էր, որ տեղի ունեցան հայ ժողովրդի սրբացումը եւ Հայ Առաքելական Մայր Եկեղեցու հերոսացումը։ Եւ 15 դար այսպես սրբացած ու հերոսացած, որպես մեկ միավոր, որպես մեկ ժողովուրդ, ապրում ենք այս աշխարհում։ 1500 տարի է անցել Ավարայրի ճակատամարտից, սակայն, ցավոք, 1500 տարվա հոլովույթի մեջ նույնիսկ չի մարել այդ պայքարը։ Հայոց Ավարայրը շարունակվում է եւ այսօր. ինչպես այն ժամանակ զրադաշտական պարսիկներն էին փորձում, այնպես այսօր, ոչ կրոնափոխության անվան տակ, ուզում են մեր ժողովրդին Քրիստոսից հեռացնել եւ մեր ազգային արժեքները քարուքանդ անել, հեռացնել մեզ մեր ազգային ինքնությունից։

Ցավում եմ, որ մեր դեմ այդ պատերազմը ոչ միայն օտարները, այլ նաեւ մեր հայրենակիցներն են մղում։

Շարունակվում է Ավարայրը, որով հայ ժողովուրդը պաշտպանում է իր քրիստոնեական ոգին, այն, որ մինչեւ այսօր էլ հայի համար միակ ճշմարտությունն է. «Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կլինի մեզ հակառակ։ Նա, որ իր Որդուն իսկ չխնայեց, այլ մեր բոլորի համար մահուան մատնեց նրան, էլ ինչպէ՞ս մեզ չի շնորհելու ամենայն ինչ Նրա հետ մէկտեղ» (Հռոմ. Ը. 31–32)։

Այս ճշմարտություններով ենք ապրում եւ ոչ թե պարզապես հուսալով, այլ վստահ լինելով այդ խոստմանը։ Եւ դրա համար այսօր ո՛չ հարազատ եղբայր կամ քույր, ո՛չ օտար մեկը չեն կարող մեր կյանքը հեռացնել քրիստոնեությունից։

Գիտենք, թե որն է դրա նպատակը. որպեսզի դաստիարակենք սերունդներ, որոնք չունենան ո՛չ ազգային նկարագիր, ո՛չ հայրենիքի նկատմամբ որեւէ կապվածություն եւ ո՛չ էլ հարգանք, սեր իրենց նախնյաց ժառանգությանը։ Այսօրվա լեզվով ասած՝ աշխարհաքաղաքացու պետքն ունեն, որ բացի իր սեփական անձից, բացի իր իսկ անձնական մղումներից ու նկրտումներից՝ ոչինչ չունի այս կյանքում։

Սակայն երբեք ո՛չ պարսիկը հաջողեց, ո՛չ՝ արաբը, ո՛չ մոնղոլն ու թաթարը եւ ո՛չ էլ թուրքը հաջողեցին, եւ առավել եւս մեզ հարազատ կոչվածները երբեք չեն կարող հաջողել։ Մենք այսօր ազգովի կարող ենք մեր ճակատները բաց քայլել աշխարհում, որովհետեւ մեր հերոս Եկեղեցին եւ սուրբ ժողովուրդը հավատարիմ են Տիրոջ հավատքին։

Այսօր մենք հիշատակում ենք բոլոր հայ քաջորդիներին, որոնք իրենց կյանքը տվեցին Ավարայրի ճակատամարտում, բայց դրա հետ մեկտեղ այսօր աղոթում ու հիշում ենք բոլոր այն քաջորդիներին, որոնք իրենց կյանքը տվել ու տալիս են մեր օրերի Ավարայրում՝ Արցախյան ճակատամարտում, նրանց, ովքեր իրենց երիտասարդ կյանքը տվեցին, որ շարունակվի մեր ազգի կյանքը։ Ոչ միայն պարզապես աշխարհի վրա շնչելու, ուտելու համար, այլ ապրելու՝ որպես ժողովուրդ, որպես ստեղծարար ազգ եւ աշխարհի ժողովուրդների կարեւոր մի մաս՝ լինելով Հիսուսի ժողովուրդ, լինելով Աստծու ժողովուրդ։

Եւ այսօր, ի հիշատակ մեր բոլոր քաջ հայորդիների, նրանց անուններով մկրտված կամ անվանակոչված բոլոր հայ զավակներին, իբրեւ անվանակոչության տոն, մեր շնորհավորանքն ենք բերում՝ ասելով, որ իրենց անունով ապրեն, եւ թող այդ անունը լինի իրենց ողջ կյանքի ճանապարհը։

Անշուշտ, այսօր հատուկ նշվում է ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնը։ Գարեգին, որը մեր հերոս քաջորդիներից էր Ավարայրի ճակատամարտում։

Վեհափա՛ռ Տեր, թո՛ւյլ տվեք մեր բոլոր հոգեւոր եղբայրների անունից, նաեւ, վստահաբար, մեր ողջ հավատացյալ քույրերի եւ եղբայրների կողմից բերելու Ձերդ Սրբությանը մեր շնորհավորանքներն անվանակոչության տոնի առիթով՝ մաղթելով խաղաղություն եւ գարեգինյան քաջություն՝ շարունակելու համար այսօրվա Ավարայրը եւ հաղթելու այն։

Թող Տերն Իր ուժն ու կարողությունն առատապես պարգեւի Ձեզ, որպեսզի Ձեր հովվական մականն ու հայրապետական գավազանը միշտ բարձր լինեն եւ կարողանան առաջնորդել Ձեր իսկ հոտին դեպի ապագա հաղթանակներ, դեպի մեր Տեր Հիսուս, դեպի հոգու խաղաղություն եւ աստվածային օրհնություն։

Բոլորիս կողմից մեր աղոթքն է, որ մեր ազգը կարողանա այս Ավարայրն էլ հաղթել եւ գնալ առաջ։ Տերը, որ մշտապես մեզ հետ է եւ թույլ չի տալիս, որ մենք որեւէ մեկից վախենանք, հստակ իմանալով, որ որեւէ մեկը չի կարող մեզ հակառակ լինել՝ պիտի Իր օրհնությունը հանապազ պարգեւի մեր ժողովրդին այսօր եւ հավիտյանս. ամեն։